ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԱՇՈՑՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

(2023-2028 ԹԹ.)

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան
1. Իրավիճակի վերլուծություն , ուժեղ և թույլ կողմեր
1.1. Ուսումնական հաստատության գործունեությունը, շենքային պայմանները
1.2 Ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազան
1.3 Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության վերլուծություն
1.4 Հաստատության համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ
1.5 Հաստատության ուսումնական միջավայրը
1.6 Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացումը
1.7 Օգտագործվող ՏՀՏ կրթական տեխնոլոգիաների, նորարարությունների ներկայացումը
1.8 Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծություն
1.9 Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն
1.10 Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն
2. Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը
3. Նպատակների, խնդիրների սահմանում
4.Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողություններ, միջոցառումներ և պատասխանատուներ
5. ՈՒսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարման արդյունքների գնահատման չափանիշներ
6. Ծրագրի իրականացման ռիսկերը և դրանց ազդեցությանն ուղղված գործողություններ
7. ՈՒսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական բազան
8. ՈՒսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման վերահսկողության մեխանիզմները

ՆԱԽԱԲԱՆ

Հայրենիքի պաշտպանության և պետականության ձևավորման հիմնաքարը կրթությունն է, որը սկսվում է դեռ վաղ տարիքից և չունի ավարտի սահման: Յուրաքանչյուր ոք կարող է կրթվել և ինքնակրթվել այնքան ժամանակ, որքան կցանակա: Կրթությունն այն զենքն է, որով հնարավոր է դառնում ձևավորել մասնագիտությունների տեր անձանց, ովքեր կարող են կերտել մեր երկրի վաղվա ապագան: Կրթությունը մի գործընթաց է, որի շնորհիվ իրականացվում է անհատի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցումն ու դաստիարակությունը, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելուն և սերունդներին փոխանցելուն:

«Աշոցքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 2023-2028 զարգացման ծրագիրը կազմվել է ուսումնական հաստատության իրավիճակի վերաբերյալ առկա տվյալների, ուժեղ և թույլ կողմերի վերլուծության արդյունքում: Զարգացման ծրագիրը բխում է ՀՀ «Սահմանադրության», «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին», «Երեխայի իրավունքների մասին», «Լեզվի մասին», ՀՀ օրենքներից, այլ օրենքներից և դրանից բխող այլ ենթաօրենսդրական ակտերից:

Սույն զարգացման ծրագիրը հանդիսանում է «Աշոցքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման ռազմավարական նշանակության փաստաթուղթը:

Զարգացման ծրագրի նպատակն է պլանավորել ուսումնական հաստատության հետագա զարգացման ընթացքը՝ լուծելով դպրոցի առջև դրված խնդիրները արդյունավետ և օպտիմալ եղանակներով, հասնելով ցանկալի արդյունքի՝ հիմնվելով «Աշոցքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Ուսումնական հաստատություն կամ Դպրոց) իրավիճակի օբյեկտիվ վերլուծության վրա:

1. Իրավիճակի վերլուծություն, ուժեղ և թույլ կողմեր

1.1 Ուսումնական հաստատության գործունեությունը, շենքային պայմանները

Շիրակի մարզի Աշոցքի միջնակարգ դպրոցը ներկայիս շենքային կառույցում հիմնադրվել է 2014 թվականին:

Դպրոցի գործունեությունն ամբողջությամբ նպատակաուղղված է դպրոցի սաների հոգևոր, մտավոր, ինչպես նաև ֆիզիկական զարգացմանը, հասարակության մեջ նրանց դերի սոցիալականացմանը և կարևորմանը, անձի լիարժեք կերտմանը՝ որպես ապագա հայրենիքի զավակ: Դպրոցի ողջ անձնակազմն առանջնորդվում է հետևյալ կարգախոսով՝

- կրթել հայրենիքի ապագա պաշտպաններ, դարձնել նրանց նպատակասլաց և անհնարինին ձգտող հասարակության անդամներ՝ արդար և ազնիվ գիտելիքի ճանապարհով:

Դպրոցի տեսլականն է. դառնալ երկրում մրցունակ պայմաններ ունեցող ուսումնական հաստատություն, որը հեղափոխական կլինի կրթական ոլորտում, հասարակությանը նվիրելով սերունդ, որը կփայլի ապագայի մարտահրավերներին դիմակայելու ճկունությամբ և գիտելիքի հզորությամբ:

Դպրոցի գործունեության առարկան յուրաքանչյուր աշակերտի կրթադաստիարակչկական գործընթացների արդյունավետ կազմակերպումն է՝ սահմանված չափորոշիչներին համապատասխան:

ՀՀ Շիրակի մարզի <<Աշոցքի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում երեխաների կրթությունը ամբողջովին իրականացվում է պետության կրթական քաղաքականության պահանջներին համապատասխան:

Դպրոցում ըստ տիպային կառույցի կրթական ծրագրերի աստիճանը միջնակարգն է (1-12 դասարաններ)՝ 5-օրյա աշխատանքային գրաֆիկով: Հաստատության շենքը տիպարային կառույց է՝ 150 աշակերտ նախագծային հզորությամբ և հարմարեցված կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների պահանջներին:

Ներքոնշյալ աղյուսակում ներկայացված է հաստատության շենքային պայմանները, դասասենյակները և դրանց ընդհանուր վիճակը՝

Աղյուսակ1.Ուսումնական հաստատության շենքային պայմանները

Դպրոցի շենքը և հարմարությունները	
Հարկայնությունը	3
Նախատեսված աշակերտական տեղերի քանակը	150
Տվյալ շենքում դպրոցի տեղակայման տարեթիվը	2014
Փաստացի հաճախող երեխաների թիվը	323
Շենքի ընդհանուր մակերեսը, *մ*^{2}	2793.00

Տարածքների անվանումները					
Անվանումը	Քանակը	Ընդհանուր մակերես, *մ*^{2}	Փաստացի գործողների քանակը	Դրանց փաստացի վիճակը	Դրանց ընդհանուր մակերեսը, *մ*^{2}
Դասասենյակ	6	278.43	6	լավ	278.43
Լաբորատորիա	2	24.00	2	բավարար	24.00
Մարզադահլիճ	1	228. 51	1	բավարար	228. 51
Նիստերի դահլիճ	1	20. 00	1	լավ	20. 00
Ճաշարան	1	20. 00	1	լավ	20. 00
Բուժսենյակ	1	-	-	լավ	-
Գրադարան	1	613. 20	1	լավ	613. 20
Արհեստանոց	1	-	-	լավ	-
Առանձնասենյակ	3	57.15	3	լավ	57.15
Համակարգչային սենյակ	1	10.00	1	լավ	10.00
ՆԶՊ -ի սենյակ	1	11. 00	1	լավ	11. 00
Հանդերձարան	6	81. 51	6	լավ	81. 51

Դպրոցն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվամբ կլոր կնիք, կանոնադրություն, որում ամրագրված են ներքին կարգապահական կանոնները, ունի նաև առանձին հաշվեկշիռ: Հաստատությանը վերաբերող գործընթացները կանոնակարգվում են ինչպես Դպրոցի կանոնադրությամբ, այնպես էլ մի շարք օրենքներով և իրավական ակտերով, մասնավորապես՝ ՊՈԱԿ-ների մասին օրենք, ՀՀ կրթության մասին օրենք, ԿԳՄՍ նախարարի հրամաններ, դպրոցի տնօրենի հրամաններ,

կառավարության որոշումներ և իրավական ակտեր :

Ուժեղ կողմեր	**Թույլ կողմեր**
• Դպրոցն հագեցված է շուրջօրյա ջրամատակարարմամբ: • Կոյուղացումը կենտրոնացված է: • Առկա է գազամատակարարում և էլեկտրամատակարարում, ինտերնետային կապ, հեռախոսային կապ: • Հաստատության շենքային պայմանները համապատասխանում են շահագործման անվտանգության առկա նորմատիվներին, ինչպես ըստ կարգի պահպանվում է հակահրդեհային անվտանգությունը: • Դպրոցն ունի հատուկ տարհանման ելք՝ ֆորսմաժորային իրավիճակների համար նախատեսված:	• Հաստատության շենքը կարիք ունի ընթացիկ վերանորոգման և հարդարման: • Շենքում տաք ջրամատակարարումը բացակայում է: • Հաստատություն հաճախող երեխաների թիվը գերազանցում է շենքի պլանային կառուցվածքով նախատեսված երեխաների քանակը:

1.2 Ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազան

Ընդհանուր առմամբ Ուսումնական հաստատությունը հագեցած է կրթական ծրագրեր իրականացնելու համար կարևոր դեր և նշանակություն ունեցող նյութատեխնիկական բազայով, սակայն ժամանակակից աշխարհում , երբ գնալով փոխվում են կարիքները, պահանջարկը՝ նորագույն տեխնոլոգիաների նկատմամբ գնալով ավելանում է: Դպրոցում առկա գույքը և սարքավորումները

որոշ մասով կարիք ունեն թարմացման՝ ելնելով առկա կարիքներից և պահանջարկից:

Ուժեղ կողմեր	**Թույլ կողմեր**
Դպրոցն ունի՝ - իր առանձին գրադարանը, - բոլոր երեխաների համար հարմարեցված գույք, - Բոլոր աշակերտները ապահովված են անհրաժեշտ գրքերով: - Առկա է ընդարձակ մարզադահլիճ, որտեղ երեխաները անցկացնում են Ֆիզկուլտուրայի դասերը առանց որևէ խոչընդոտների	Դպրոցը կարիք ունի ՝ - նոր համակարգիչների, դիդակտիկ նյութերի ու պարագաների,լաբորատոր սարքավորումների - Մասնագիտացված սենյակների, գույքի նորացման, մասնավորապես՝ աշխարհագրության դասասենյակ՝ նոր քարտեզներով հագեցած, ֆիզիկայի և քիմիայի դասասենյակ՝ հագեցած լաբորատոր սարքավորումներով և նյութերով, կենսաբանության դասասենյակ՝ հագեցած համապատասխան անհրաժեշտ գույքով և սարքավորումներով:

1.3 Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության վերլուծություն

Ուսումնական հաստատությունն ունի կառավարման խորհուրդ և տնօրեն, ով զբաղվում է դպրոցում իրականացվող գործընթացների ընթացիկ կառավարման և կազմակերպչական հարցերով: Վերջինս սերտ համագործակցության մեջ է կառավարման խորհրդի հետ, ինչը առավել արդյունավետ է դարձնում հաստատության կառավարման գործընթացը: Բացի այդ որպես խորհրդակցական մարմիններ, դպրոցում առկա է նաև ՝

- մանկավարժական խորհուրդ,
- ծնողական խորհուրդ,
- աշակերտական խորհուրդ:

Յուրաքանչյուր մարմին ունի իրեն հատուկ վերապահված գործառույթները և պարտականությունները, որոնց արդյունավետ իրականացումը բխում է թե՛ իրենց, և թե՛ դպրոցի շահերից:

Կառավարման խորհրդի կողմից պարբերաբար իրականացվում են վերահսկողական աշխատանքներ, որոնք միտված են վեր հանելու կատարված աշխատանքներում բացթողումները և դրանց արագ լուծմանը: Որպես վերահսկողական գործիք կիրառվում է նաև մշտադիտարկումը, որը հնարավորություն է տալիս կառավարման խորհրդի անդամներին գնահատել իրավիճակը նախորդ և առկա տվյալների զուգակցմամբ:

Ուժեղ կողմեր	**Թույլ կողմեր**
- Դպրոցի կառավարման խորհուրդը և տնօրենը սերտ փոխհամագործակցության մեջ են, հաղորդակցությունն իրականացվում է պարբերաբար ՝ առանց խոչընդոտների: - Դպրոցի կառավարման խորհուրդը ըստ օրենքի պահանջի իրականացնում է իրեն վերապահված բոլոր գործառույթները ինչպես կարգն է, գործում է Դպրոցի Կանոնադրությանն համապատասխան, պատրաստակամ է աջակցելու ցանկացած նախաձեռնության, որի իրականացումը կտանի դպրոցի բարգավաճմանը և զարգացմանը:	- Կարիք կա կառավարման խորհրդի դերի բարձրացման և կարևորման, վերջինիս անդամ հանդիսացող անձանց ակտիվության բարձրացմանը: - Կարիք կա խորհրդի անդամների վերապատրաստման, որպեսզի վերջիններս կարողանան գործել լիազորությունների ամբողջական իրականացմամբ և բարձր արդյունավետությամբ: - Դպրոցը չունի հոգաբարձուների խորհուրդ:

1.4 Հաստատության համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ

Ուսումնական հաստատությունը բոլոր հնարավոր և անհնարին տարբերակներով փորձում է կապը պահել բոլոր շահագրգիռ կողմերի հետ, մասնավորապես Աշոցք համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների, համայնքի և համայնքից դուրս գործունեություն ծավալող հասարակական կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության հետ, որոնք մեծ ներդրում և ազդեցություն ունեն դպրոցի հասարակական կյանքի ակտիվության գործում: Ցավոք համայնքում այնքան էլ մեծ թիվ չեն կազմում հասարակական կազմակերպությունները, ուստի և այս մասով առկա են որոշ բացեր, և երեխաները տարբեր կամավորական աշխատանքներում, հետաքրքիր միջոցառումներում մասնակցայնություն ցուցաբերել չեն կարողանում:

Դպրոցը նաև սերտորեն համագործակցում է կրթական ոլորտի տարբեր կառույցների հետ, որոնք իրենց դրական ազդեցությունն են թողնում կրթական կարողությունների զարգացման և առաջընթացի վրա:

Հարկ է նշել, որ ծնողական համայնք-դպրոց համագործակցությունը ևս կարևոր ուղղություն է, քանի որ ծնողները որպես շահագրգիռ կողմեր, անմիջական ազդեցություն են թողնում դպրոցի ուսումնական միջավայրի վրա, իրենց ներուժի սահմաններում ներդրում են ապահովում դպրոցում առաջացած բազմաթիվ խնդիրների լուծման գործում: Սակայն ոչ բոլորն են ցուցաբերում ակտիվ մասնակցություն դպրոցի զարգացմանն ուղղված գործընթացներում, ինչի համար պարբերաբար դպրոցում կազմակերպվում են սեմինարներ, քննարկումներ՝ ծնողների մասնակցության դերի կարևության ընկալման վերաբերյալ:

Ուժեղ կողմեր	**Թույլ կողմեր**
- Համայնքի ՏԻՄ անդամների հետ համագործակցային ամուր կապերի առկայություն: - Մանկավարժական անձնակազմի կողմից ապահովված է ծնողների մասնակցայնության բարձր աստիճան կրթադաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործում՝ ամրապնդելով ծնող-դպրոց, ծնող-ուսուցիչ-աշակերտ օղակը:	- Համագործակցային հարաբերությունների հաստատման կարիք կա այլ կրթական կենտրոնների, դպրոցների և ուսումնական հաստատությունների հետ: - Բարեգործական կազմակերպությունների հետ համագործակցային հարաբերությունների

	բացակայություն: - Ծնողական համայնքի ոչ լիարժեք ներգրավվածությունը, ինչը ուղղակիորեն չի խթանում երեխաների մոտ սովորելու և այլ խմբակներին մասնակցություն ցուցաբերելու հարցում: - Կամավորական աշխատանքներում աշակերտների ներգրավվածության ցածր մակարդակ/Աշոցք համայնքում ՀԿ-ների սակավություն/:

1.5 Հաստատության ուսումնական միջավայրը

Ուժեղ կողմեր	**Թույլ կողմեր**
- Դպրոցն ապահովված է շենքային բավարար պայմաններով, որոնք թույլ են տալիս իրականացնելու դասապրոցեսի ամբողջ ընթացքն ըստ կարգի և օրենսդրական պահանջներին համապատասխան: - Ուսումնական ողջ գործընթացը միտված է երեխաների հոգևոր, մտավոր և ֆիզիկական կարողությունների ամրապնդմանը և զարգացմանը:	- Համակարգչային սենյակի ոչ լիարժեք կահավորանք, նոր ծրագրային փաթեթով ապահովված համակարգիչների բացակայություն, - Քիմիայի և ֆիզիկայի դասապրոցեսների արդյունավետ իրականացման համար լաբորատորիայի ոչ լիարժեք կահավորանք: - Մասնագիտացված և առանձին առարկայական դասասենյակների պակաս, - Աշակերտների մոտ ոգևորության և խրախուսական մեթոդների պակաս, ինչը դժվարացնում է վերջիններիս կողմից դպրոցական կյանքում ակտիվություն ցուցաբերելու հարցում: - նիստերի դահլիճի վթարային վիճակ

1.6 Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացումը

Դպրոցում փաստացի աշխատակցիների թիվը 51 է, որի մեջ ներառված են վարչակառավարչական անձնակազմը, մասնագետները և այլ հաստիքացուցակով գրանցված աշխատակիցները: Մանկավարժների հաստիքացուցակը ներկայացված է աղյուսակ 3 -ում:

Աղյուսակ 3. Ուսումնական հաստատությունում աշխատող մանկավարժական անձնակազմի քանակը

Թեման	***Հաստիքի քանակը***	***Նշումներ***
Դասվար	4	
Մաթեմատիկա	3	
Հայոց լեզու	4	+3 չեն դասավանդում
Ռուսաց լեզու	3	
Անգլերեն	2	
Քիմիա	1	+1 լաբորանտ/ դասավանդում է
Կենսաբանություն	1	+1 գործավար/չի դասավանդում
Ֆիզիկա	2	
Աշխարհագրություն	1	
ՆԶՊ	1	
Ֆիզկուլտուրա	2	+1 չի դասավանդում
Տեխնոլոգիա	1	
Ինֆորմատիկա	1	
Ձեռն. կրթ.	1	
Հոգեբան	1	
Ուս. օգն	3	
Պատմություն,ՀԵՊ	3	

Ընդհանուր առմամբ, 2020-2023 թթ. պարտադիր ատեստավորում են անցել 16 ուսուցիչ, տարակարգ ունեցող ուսուցիչների քանակը ընդամենը մեկն է , իսկ

կամավոր ատեստացիայի դիմած ուսուցիչ չունենք: Ամեն տարի մանկավարժների 30% -ը ներկայացվում է պարտադիր ատեստավորման:

Աղյուսակ 4 . Դասավանդող ուսուցիչների տարիքային կազմը ըստ տարիների

Ուսուցիչների տարիքային կազմը	**2019-2020 ուս. տարի**	**2020-2021 ուս. տարի**	**2021-2022 ուս.տարի**
մինչև 30 տարեկան	4	3	3
31-40 տարեկան	4	5	4
41-50 տարեկան	6	5	6
51-55 տարեկան	7	10	9
56 տարեկան և ավելի	11	8	9

Ուժեղ կողմեր	**Թույլ կողմեր**
- Դպրոցի մանկավարժական անձնակազմի յուրաքանչյուր անդամ աշխատում է ըստ իր մասնագիտության, մեծ մասը անցել են պարտադիր ատեստավորում: - Մանկավարժական անձնակազմի միջև առկա է սերտ համագործակցություն, - Աշխատանքը իրականացվում է բարեդրացիական հարաբերությունների և դրական մթնոլորտի առկայությամբ:	- Նորագույն տեխնոլոգիաների դարում դպրոցում կիրառվող և ապագայում հնարավոր կիրառվելիք ՏՀՏ գործիքների արդյունավետ օգտագործման նպատակով անձնակազմի վերապատրաստումների կարիք կա:

1.7 Օգտագործվող ՏՀՏ կրթական տեխնոլոգիաների, նորարարությունների ներկայացումը

Դպրոցում ուսումնական գործընթացների արդյունավետ իրականացման նպատակով շատ հաճախ են կիրառվում նոր մեթոդներ և գործիքներ, որոնք օգնում են երեխաների համար առավել գրավիչ դարձնել դասապրոցեսը: Սակայն դպրոցի առկա հնարավորությունների սահմանում որպես նորագույն տեխնոլոգիաներ, կարելի է ասել այդքան էլ չեն կիրառվում, մասնավորապես նոր սերնդի և նորովի հագեցած ծրագրային փաթեթով համակարգիչների պակաս կա, սակայն նորարարությունները բնականաբար չեն սկսվում և ավարտվում միայն տեխնոլոգիաներով, սարքավորումներով: Մանկավարժական անձնակազմի կողմից պարբերաբար կիրառվում են նոր մեթոդներ, որոնք հնարավորություն են տալիս առավել մատչելի և ըմբռնելի ներկայացնել երեխաների համար դպրոցական նյութերը և թեմաները: Բացի այդ մանկավարժական անձնակազմը պարբերաբար անցնելով վերապատրաստումներ, ստանալով նոր գիտելիքներ և հմտություններ, դրանք միաժամանակ կիրառում է երեխաների համար դասապրոցեսի ընթացքում:

Ուժեղ կողմեր	**Թույլ կողմեր**
- Դասապրոցեսները առավել աշակերտակենտրոն դարձնելու նպատակով կազմակերպվում են կրթական նոր մեթոդներով, ուղեցույցներով և ձեռնարկներով, ինչը աշակերտների մոտ մեծ մոտիվացիայի և ոգևորության առիթ է հանդիսանում:	- Դասասենյակում առկա է աշակերտների մեծ թիվ, որը դժվարացնում է ՏՀՏ մեթոդների կիրառման արդյունավետության և որակի մասով: - ՏՀՏ գործիքների պակաս կա, դրանց գնման ոչ բավարար ֆինանսական հնարավորություններ և ներուժ:

1.8 Չափորոշիչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծություն

Ուսումնական հաստատությունում կրթության որակը գնահատվում է հետևյալ չափորոշիչներով՝

- Ուսումնական գործընթացի առկա վիճակը (աշակերտի կարիքին համապատասխան ուսուցման կազմակերպում),
- Ուսումնական գործընթացի արդյունավետությունը (սաների կրթական կարիքներին համապատասխան կրթության բոլոր մասնակիցների փոխհամագործակցության ապահովում),
- Կրթական գործընթացի կատարողականը (մանկավարժական և վարչատնտեսական աշխատակիցների աշխատանքի կազմակերպման հատուկ պլանավորված մեխանիզմների առկայություն),
- Դպրոցի զարգացման ծրագրերի և նախագծերի իրականացումը և դրանց արդյունավետությունը:
- Ուսումնադաստիարակչական միջոցառումների որակը (դպրոցական միջոցառումների ,թեմատիկ խմբակների պարբերաբար իրականացում),



Գծ. 1. Աշակերտների թվի դինամիկան ըստ ուսումնական տարիների

Ինչպես երևում է գծապատկեր 1-ից 2018 թվականից մինչ այժմ հիմնականում աշակերտների թիվը ավելանում է, չունենք նվազման միտում:

Աղյուսակ.5 Աշակերտների առաջադիմությունը ըստ դասարանների

	Աշակերտների թիվը ըստ դասարանների	Առաջադիմությունը	
դաս.	*2022-2023թթ.*	*գերազանց*	*լավ*
I	21	-	-
II	32	10	14
III	28	11	10
IV	25	4	13
V	34	3	14
VI	35	2	9
VII	27	-	10
VIII	44	-	12
IX	26	3	6
X	22	1	5
XI	12	-	6
XII	12	-	6

Ուժեղ կողմեր	**Թույլ կողմեր**
- Ուսումնական հաստատությունը հավասարապես բոլոր սաների համար ապահովում է կրթության իրավունքը առանց որևէ խտրականության և առկա չափորոշիչներին համապատասխան: - Չեն դադարում աշխատանքեր իրականացվել, որոնք միտված են լինում աշակերտների կրթական կարողությունների, գիտելիքների և հմտությունների նորովի զարգացմանը և առաջընթացին: - Պարբերաբար իրականացվում են սովորողների կողմից անհատական աշխատանքների ներկայացում,	- Աշակերտների կողմից դպրոցական միջոցառումների, խմբակների մասնակցայնության ցածր աստիճան: - Աշակերտների շրջանում տարաբնույթ միջոցառումների նկատմամբ հետաքրքվածության ոչ լիարժեք ցուցաբերում, մոտիվացիայի պակաս: - Դպրոցի գրադարանից օգտվողների ցածր մակարդակ:

հետազոտական աշխատանքների կազմակերպում: - Իրականացվում են ՆԴՎ (Ներդպրոցական վերահսկողություն) ՝ կիրառելով տարբեր ձևեր և մեթոդներ: - Ուսումնական հաստատության ներսում կազմակերպվում են մասնագիտական զարգացմանն ուղղված միջոցառումներ, բաց դասեր, առարկայական շաբաթներ, մեթոդական փառատոններ և այլ թեմատիկ միջոցառումներ: - Միասնական քննություններին մասնակցության և ԲՈՒՀ ընդունված շրջանավարտների քանակի տարեցտարի աճ: - Դպրոցն ունեցել է 2 տարի դպրոցական առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլի մասնակից անգլերեն և հայոց պատմություն առարկաներից:	

1.9 Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն

Դպրոցում, թե՛ աշակերտների, և թե՛ անձնակազմի համար ստեղծված է այնպիսի ուսումնական և կրթադաստիարակչական միջավայր, որտեղ բոլորը ազատ են արտահայտելու իրենց կարծիքը, ներկայանալու նոր գաղափարներով և նախաձեռնություններով: Չկան ոչ մի տեսակի խտրականություններ, բոլոր աշակերտները, թե ՛ մանկավարժական անձնակազմի կողմից, թե տնօրենի կողմից հավասարապես են դիտարկվում, բոլորի ձայնը լսելի է և ընդունելի: Դպրոցում պարբերաբար իրականացվում են բաց քննարկումներ մանկավարժների, աշակերտների մասնակցությամբ, որոնց ժամանակ հնարավորություն ենք ունենում վեր հանել մի շարք խնդիրներ, դրանց լուծման

ուղիներ գտնել և հարթել ցանկացած խնդիր, որը կարող է վնասել դպրոցի նեքին միջավայրը և խաթարել դրական մթնոլորտը:

Ժամանակ առ ժամանակ աշակերտների շրջանում իրականացվում են հարցումներ, հետազոտություններ, որոնք միտված են լինում վերջիններիս համար հետաքրքրությունների վերհանմանը, աշակերտների մոտիվացիայի բարձրացմանը և կրթության որակի բարելավմանը: Նախորդ հարցումների արդյունքում պարզ է դարձել, որ աշակերտները մեծ սիրով կցանկանային, որպեսզի դպրոցում կազմակերպվեն ինտելեկտուալ խաղեր, վիկտորինաներ, ինչպես նաև միջհամայնքային և միջմարզային սպորտլանդիաների կազմակերպումը: Դպրոցի ուսումնական անձնակազմը միանշանակ դիտարկում է երեխաների կողմից արտահայտված բոլոր կարծիքները և անհրաժեշտ քայլեր ձեռնարկում գաղափարները իրականություն դարձնելու համար:

Ինչ վերաբերում է դպրոցի անձնակազմին, ապա վերջիններս ՝ ունենալով չափազանց կարևոր դերակատարում, հաշվի են առնվում նաև նրանց կողմից առաջարկված նոր գաղափարները, նախաձեռնությունները և կարծիքները, հարկ եղած դեպքում դրանք մշակվում են և դպրոցի վարչակառավարչական անձնակազմի կողմից ի կատար ածվում:

Ուժեղ կողմեր	**Թույլ կողմեր**
- Մասնակցային, թափանցիկ և բազմակարծիք ուսումնական միջավայրի առկայություն: - ԿԱՊԿՈՒ սովորող սաների անհատական ուսուցման պլանի առկայություն: - Հանրակրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի իրականացումը: - Ուսումնական գործընթացում կիրառվելիք նոր դասագրքերի, մեթոդական ձեռնարկների մասով քննարկումների և բանավեճերի կազմակերպում դրական և բացասական կողմերի վերհանում:	- Ներառական կրթության ապահովման համար անհրաժեշտ գույքի և հարմարությունների պակաս: - Մասնակցայնության մասով աշակերտական խորհրդի կողմից ուսումնական գործընթացներում ներգրավման ցածր մակարդակ կա, մասնավորապես վերջիններիս կողմից ոչ լիարժեք հետաքրքրվածության ցուցաբերում կրթական գործընթացների որակի բարելավման վերաբերյալ:

1.10 Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն

Ուսուցիչը մեր կյանքի այն կարևոր դերակատարն է, ով բացի մաշտոցյան գրերը ուսուցանելուց, տալիս է այն կարևոր հիմնաքարը, որը ապագայում դառնալու է զենք՝ կյանքի դժվարությունները հաղթահարելու և նոր գիտելիքներով ու հմտություններով զինվելու համար: Չափազանց կարևոր է վերջինիս կողմից կատարված աշխատանքը գնահատել ըստ արժանվույն և ոգևորել՝ ապագայի սերունդներին կրթելու և պայքարի ոգով սերմանելու համար: Դպրոցում մանկավարժական անձնակազմի համար պարբերաբար կիրառվում են խրախուսական գործիքներ՝ ուսումնական հաստատության ֆինանսական հնարավորությունների սահմանում, որը ըստ էության բավարար չէ գնահատելու համար այն աշխատանքը, որն իրականացնում են նրանք: Բացի ֆինանսական գործիքներից, նաև կիրառվում են այլ մեթոդներ, որոնք որոշ չափով խրախուսում են անձնակազմին և մոտիվացիայի նոր աղբյուր են հանդիսանում, մասնավորապես դպրոցում մասնագիտական սեմինարների և միջոցառումների կազմակերպումը, փոքր խրախուսական նվերներով և պատվոգրերով պարգևատրումը և այն:

Ուժեղ կողմեր	**Թույլ կողմեր**
- Ուսումնական հաստատության ֆինանսական հնարավորությունների սահմաններում ըստ անհրաժեշտության կիրառվում են անձնակազմի խրախուսման գործիքներ: - Դպրոցի տնօրինության կողմից պարբերաբար կազմակերպվում են սեմինարներ, որոնք միտված են լինում անձնակազմի մասնագիտական որակների բարելավմանը, նոր գիտելիլքների և հմտությունների	- Դպրոցի անձնակազմի համար խրախուսման մեթոդների կիրառության պակաս և նոր մեթոդների ներդրման անհրաժեշտություն կա : - Մանկավարժական անձնակազմի մոտ ինքնակրթությամբ զբաղվելու մոտիվացիայի պակաս կա: - Այժմյան հասարակության մեջ ուսուցչի դերի ոչ լիարժեք ընկալման և հասարակության կողմից արժևորման պակաս կա: - Աշխատավարձերի ցածր

ձեռքբերմանը, որոնք կարող են դրականորեն ազդել ուսումնական միջավայրի, ինչպես նաև երեխաների կրթական կարողությունների բարելավմանը :	մակարդակ

2. Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը

Ուսումնական հաստատության ֆինանսավորումը իրականացվում է պետբյուջեի միջոցներով՝ համապատասխան հանրակրթական ծրագրերի ՝ կախված սովորողների թվից, իսկ 2023 թվականի սեպտեմբերից՝ դասարան թվով: Ամբողջ ֆինանսատնտեսական գործունեությունը իրականացվում է օրենսդրությամբ սահմանված կարգով, առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքով: Ներքոնշյալ աղյուսակներում ներկայացված են ֆինանսական ցուցանիշները ըստ տարիների՝

Աղյուսակ 6. Ֆինանսական ցուցանիշների նկարագիրը. 2022 թթ.

Հիմնական միջոցներ (սեփականության իրավունքով) (հազ. դրամ)		**Ընդամենը ընթացիկ ակտիվներ (հազ. դրամ)**		**Ընդամենը ընթացիկ պարտավորություններ (հազ. դրամ)**		**Այլ ոչ ընթացիկ ակտիվներ (հազ. դրամ)**		**Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ (հազ. դրամ)**	
տարեսկիզբ	*տարեվերջ*	*տարեսկիզբ*	*տարեվերջ*	*տարեսկիզբ*	*տարեվերջ*	*տարեսկիզբ*	*տարեվերջ*	*տարեսկիզբ*	*տարեվերջ*
26071,8	20236,4	9,8	3,9	879,5	332,9	0	0	18887,1	18695,2

Աղյուսակ 7. Կոմունալ ծախսերի նկարագիրը. 2021-2022 թթ.

Գազի ծախս / հազ.դրամ	**Էլեկտրաէներգիայի ծախս /** հազ.դրամ	**Ջրի ծախս /** հազ.դրամ	**Կապի ծախս /** հազ.դրամ	**Այլ կոմունալ ծախսեր /** հազ.դրամ

2021 թ.	*2022 թ.*	*2021թ.*	*2022թ.*	*2021թ.*	*2022թ.*	*2021թ.*	*2022թ.*	*2021թ.*	*2022թ.*
2368,1	1969,5	146,6	24	89,96	202,1	114,6	117,6	439,8	446,2

Աղյուսակ 8. Աշխատավարձի գծով ծախսերի նկարագիրը. 2022թթ. /հազ դրամ

Վարչակառավարչական անձնակազմ		**Մասնագետներ**		**Այլ աշխատողներ**	
ծրագրված /հաշվեգրված	*փաստացի/ հաշվարկված*	*ծրագրված /հաշվեգրված*	*փաստացի/ հաշվարկված*	*ծրագրված /հաշվեգրված*	*փաստացի/ հաշվարկված*
189,8	189,7	122,9	122,,9	88,7	88,7

Աղյուսակ 9. Սննդի ծրագրի իրականացման համար պետ. բյուջեից հատկացված միջոցների փաստացի ծախսերը2020-2021թթ. /հազ դրամ

2020 թ.			**2022թ.**	
	Ձեռք բերված սնունդ	*Խոհարարի աշխատավարձ*	*Ձեռք բերված սնունդ*	*Խոհարարի աշխատավարձ*
	1524,2	420	2224,4	680
Ընդամենը	1944,2		2904,4	

3. Նպատակների, խնդիրների սահմանում

	Նպատակ	Խնդիր
1.	Ուսումնական հաստատության շենքային պայմանների և կից տարածքի բարելավում, նորամուծությունների կիրառում:	- Դպրոցին կից տարածքի բարեկարգում, այգու կանաչապատում: - Տարածքի կահավորում ` ձմեռային այգու հիմնում`ձմեռային այգուն հատուկ միջավայրի ստեղծում` աշակերտների ազատ ժամանակի կառավարում` հետաքրքրությունների և մոտիվացիայի նոր աղբյուրների ստեղծում դպրոցի տարածքում: - <<Դպրոցական մինի այգի>> ծրագրի իրականացում, երեխաների մոտ նոր հմտությունների զարգացում, թեմատիկ դասերի իրականացում
2.	Ուսումնական միջավայրի՝ նյութատեխնիկական բազայով ապահովում, ուսումնական միջավայրի բարելավում, անվտանգ միջավայրի ստեղծում:	- Դասերի արդյունավետ ընթացքն ապահովելու համար անհրաժեշտ գույքի և սարքավորումների ձեռք բերում, դասարանների կահավորում՝ ըստ կարիքի: - նոր դիդակտիկ նութերի և լաբորատոր սարքավորումների ձեռք բերում:

		- Smart գրադարանի հիմնումում՝ նոր գրականության ձեռք բերում: Ընթերցասրահի կահավորում, - Առարկայական դասասենյակների հիմնում ՝ անհրաժեշտ գույքով և սարքավորումներով կահավորում։ - Դպրոցի ապասատարանի տարածքի գնահատում, վերակառուցում և կահավորում ՝ ըստ կարիքի՝երեխաների համար անվտանգ և ապահով ուսումնական միջավայրի ապահովում: - Երեխաների կրթությանը նպաստող նոր մեթոդների կիրառում՝ լինգաֆոնային դասարանի ստեծում: - Դպրոցի միջին և ավագ խմբի աշակերտների նախաճաշի և ճաշի վերաբերյալ կարիքների գնահատում: - ճաշարանի ստեղծում: - ՀՊՉ-ով դասավանդվող դասարանների համար ինտերակտիվ գրատախտակների ձեռք բերում։
3.	Դպրոցի խորհրդակցական մարմինների կողմից իրականացվող գործառնությունների կանոնակարգում և հստակեցում։	- Խորհրդակցական մարմինների դերի կարևորում:

		- Համագործակցային ծրագրերի իրականացում: - Դասապրոցեսների կառավարման արդյունավետության բարձրացում՝ կրթական գործընթացների զարգացում: - Աշակերտական խորհրդի դերի բարձրացում, նոր ծրագրերի և նախաձեռնություններ ի խրախուսում: - Կառավարման մարմնի և խորհրդակցական մարմինների միջև սերտ կապերի պահպանում:
4.	Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների ստեղծում:	- Նորովի մշակել աշխատակազմի կողմից իրականացված գործընթացների համապարփակ վերլուծություն և գնահատում: - Կիրառել աշխատակազմի խրախուսման և արժևորման նոր մեթոդներ, միջոցներ: - Ապահովել բարենպաստ պայմաններ աշխատակազմի ինքնակրթությամբ զբաղվելու գործընթացը առավել դյուրին և խրախուսելի դարձնելու համար: - Խթանել մանկավարժական անձնակազմի՝ վերապատրաստումն

		երի մասնակցելու գործընթացը: - Ապահովել փորձի փոխանակում երիտասարդ և փորձառու ուսուցիչների միջև:
5.	Ուսումնական գործընթացում ՏՀՏ գործիքների և նորարարությունների կիրառման ապահովում:	- Նոր ՏՀՏ գործիքների ներդրում և հնարավորինս առավել հաճախ կիրառում դասապրոցեսի ընթացքում: - Իրականացնել քայլեր ուղղված անձնակազմի՝ ՏՀՏ գործիքների կիրառման հմտությունների որակական բարելավմանը: - Խթանել աշակերտների կողմից հետազոտական, նախագծային աշխատանքների իրականացումը: - Ապահովել աշակերտների տեղեկատվական կարողությունների և հմտությունների մշտական զարգացում

4.Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողություններ, միջոցառումներ և պատասխանատուներ

Գործողություն	Ակնկալվող արդյունք	Սահմանված ժամկետ	Պատասխանատուներ
-Ուսումնական հաստատության ներքին հարդարման աշխատանքների իրականացում, ուսումնական միջավայրի զարգացում: -Դպրոցի այգու տարածքի կանաչապատում, բարեկարգում՝ սեզոնային եղանակներին համապատասխան և «Դպրոցական մինի այգու» գաղափարի կյանքի կոչում:	Աշակերտների մոտ դպրոցի նկատմամբ հետաքրքրության բարձրացում, մոտիվացիայի և նոր գաղափարների ձևավորման խթանում:	2023-2028	Դպրոցի կառավարման խորհուրդ, տնօրեն:
Դպրոցը նոր նյութատեխնիկական բազայով հարստացնելուն ուղղված գործողություններ , մասնավորապես - համակարգիչներով ապահովում, նոր լաբորատոր սարքավորումներով և տեխնիկայով դասասենյակների կահավորում: -Կիբեռանվտանգության պահնապում և վերահսկում: -ՏՀՏ գործիքների ներդրում և կիրառում դասապրոցեսների ընթացքում: -Երեխաների	Նյութատեխնիկական բազայի նկատմամբ պահանջարկի բավարարում, երեխաների դասերի կազմակերպման արդյունավետության բարձրացում՝ ՏՀՏ գործիքների ներդրման շնորհիվ:	2023-2028թթ.	Դպրոցի կառավարման խորհուրդ, տնօրեն:

ժամանցը արդյունավետ ապահովելու համար Smart գրադարանի կառուցում և նրան կից ընթերցասրահի կահավորում:			
-Աշակերտական խորհրդի դերի բարձրացում, -աշակերտների համար էքսկուրսիաների կազմակերպում, պատմամշակութայի ն վայրեր այցելությունների կազմակերպում, տվյալ վայրերում թեմատիկ դասերի անցկացում -նախագծային աշխատանքների և հետազոտությունների խթանում ըստ նպատակային ուղղվածության, -ինտելեկտուալ խաղերի և մրցույթների կազմակերպում, խրախուսման տարբեր ձևերի կիրառում:	Աշակերտների մոտ մոտիվացիայի բարձրացում:	2023-2028 թթ.	Դպրոցի տնօրեն, վարչակառավարչա կան անձնակազմ:
Դպրոցի կառավարման գործառույթի մասնակցայնության ավելացում՝ խորհրդակցական մարմինների հետ սերտ փոխազդեցությունն երի ձևավորում:	Դպրոցի կառավարման արդյունավետության բարձրացում:	2023-2028	Դպրոցի կառավարման մարմին, խորհրդակցական մարմիններ:
Մանկավարժական անձնակազմի	հանրակրթական պետական	2023-2028	Դպրոցի կառավարման

վերապատրաստումների իրականացում, ինքնակրթության խթանում, անձնակազմի հմտությունների զարգացում, ՏՀՏ գործիքների և նորագույն տեխնոլոգիաների ճիշտ կիրառման նպատակով վերապատրաստումների և սեմինարների կազմակերպում	չափորոշիչներին համապատասխան կրթադաստիարակչական աշխատանքների իրականացում		խորհուրդ, տնօրեն
Դպրոցում աշակերտների անվտանգության և ապահով միջավայրի հարատև հաստատում, ապաստարանի վիճակի գնահատում, տարածքի բարեկարգում և կահավորում՝ ըստ կարիքի	Ներկա բարդ աշխարհաքաղաքական իրավիճակում երեխաների առավելագույնս անվտանգ ուսումնական միջավայրի ստեղծում	2023-2028	Դպրոցի կառավարման խորհուրդ, տնօրեն, վարչակազմակերպչական անձնակազմ
-Զարգացնել ներառական կրթությունը՝ երեխաների և ծնողների համար պարբերաբար սեմինարների կազմակերպման միջոցով, -զրույցների, քննարկումների կազմակերպում աշակերտ-ծնող-հոգեբան հարաբերությունների փոխգործունեության համար,	-Ինֆորմացիոն փոփոխություններին արագ հարմարվելու ճկունության պահպանում, -բարոյահոգեբանական կայուն մթնոլորտի ապահովում դպրոցի ներսում	2023-208	Դպրոցի տնօրեն, վարչակազմակերպչական անձնակազմ

-ծնողական ժողովների պարբերաբար հրավիրում, երեխաների ներգրավում ժողովներին, և կրթական չափորոշիչների, գնահատման եղանակների և այլ փոփոխությունների վերաբերյալ ինֆորմացիայի արագ փոխանակում՝ հետագա խնդիրներից խոսափելու և ծնող-ուսուցիչ կապը ամրապնդելու համար			
Լինգաֆոնային դասարանի ստեղծում	Աշակերտների մոտ դասերի նկատմամբ հետաքրքրասիրության բարձրացում	2023-2028	Դպրոցի տնօրեն
Դասղեկի ժամերի մեջ ներգրավել աշակերտների համար մասնագիտական կողմոնորշման թեմաների վերաբերյալ զրույցներ,քննարկումներ, անհրաժեշտության դեպքում ստեղծել համագործակցային կապեր տարբեր բուհերի և կազմակերպեությունների հետ և այցելություններ կազմակերպել տվյալ հաստատություններ	Երեխաների՝մասնագիտական կողմնորոշմանն ուղղված աշխարհայացքի ձևավորում և զարգացում	2023-2028	Դպրոցի տնօրեն

Դպրոցի, տեղական ինքնակառավարման մարմինների և ՀԿ հանրույթի միջև համագործակցությունների հաստատում, հանդիպումների կազմակերպում՝ երեխաներին ընդգրկելով տարբեր միջոցառումներում, կամավորական աշխատանքներում և այլ	Դպրոց-ՏԻՄ-ՀԿ համագործակցության ընդլայնում	2023-2028	Դպրոցի տնօրեն, վարչակառավարչական անձնակազմ

5. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարման արդյունքների գնահատման չափանիշներ

Որպես կառավարման բարձրագույն մարմին Դպրոցի կառավարման խորհուրդն է պատասխանատու իրականացնելու դպրոցի զարգացման ծրագրի նկատմամբ ընթացիկ և տարեկան վերահսկողություն և մշտադիտարկում, իսկ ահա ծրագրի իրականացման հիմնական պատասխանատվությունը կրում է դպրոցի տնօրենը, քանի որ խորհրդի կողմից վերջինս է հանդիսանում դպրոցի կազմակերպչական հարցերի առաջին պատասխանատուն: Բացի կազմակերպչական և կառավարչական գործառույթի իրականացումից, հույժ կարևոր է նաև զարգացման ծրագրի գնահատումը, ինչը ըստ էության իրենից ներկայացնում է այն արդյունքների վերլուծությունը, որոնք ստացվելու են զարգացման ծրագրով պլանավորված գործողությունները կյանքի կոչելուց հետո:

Փաստացի գնահատման գործընթացը իրականացվելու է տարեկան կտրվածքով, որը հնարավորություն է տալու պարզել զարգացման ծրագրի կատարողականը, ինչպիսին է այն յուրաքանչյուր տարվա վերջին, արդյոք առկա են բացթողումներ կամ անճշտություններ և հնարավորության դեպքում շտկել դրանք հետագա ավելորդ խնդիրներից խուսափելու համար:

Որպես գնահատման չափորոշիչ հանդես են գալու ծրագրով պլանավորված յուրաքանչյուր գործողության ցուցանիշները և դրանց բնութագրիչները: Ցուցանիշները իրենցից ներկայացնում են վիճակագրական տվյալներ, որոնք առավել մատչելի կարող են ներկայացնել և բացատրել երևույթի քանակական և որակական կողմերը, տալ համոզիչ պատասխաններ:

Այս ամենը իրականացվելու է ինչպես արտաքին, այնպես ներքին միջավայրի կողմից, քանի որ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով նախատեսված է դպրոցի գործունեության գնահատման մեխանիզմի երկու բաժին՝ ներքին և արտաքին գնահատական: Ներքին գնահատումը վերաբերում է հենց դպրոցի անձնակազմի կողմից իրենց իսկ կողմից իրականացրած գործողությունների նկատմամբ գնահատումը: Արտաքին գնահատումը կատարվում է խորհրդի կողմից ըստ օրենքով սահմանված կարգով:

Հարկ է նշել, որ հնգամյա զարգացման ծրագրի արդյունավետության ապահովման գործում չափազանց մեծ կարևորություն է տրվում դպրոցի տարեկան աշխատանքային պլանի կազմումը, ինչը իր բնույթով զարգացման ծրագրի մի մասն է կազմում: Տարեկան աշխատանքային պլանի արդյունավետ իրականացման շնորհիվ հնարավոր է ապահովել զարգացման ծրագրի տարեկան կատարողականի բարձր արդյունք և գոհացուցիչ ցուցանիշներ:

6. Ծրագրի իրականացման ռիսկերը և դրանց ազդեցությանն ուղղված գործողություններ

Գործողություն	**Ռիսկեր**	**Գործողություններ ուղղված ռիսկերի մեղմացմանը կամ չեզոքացմանը**
-Ուսումնական հաստատության ներքին հարդարման աշխատանքների իրականացում, ուսումնական միջավայրի զարգացում, -դպրոցի այգու տարածքի կանաչապատում, բարեկարգում՝ սեզոնային	Ֆինանսական միջոցների բացակայություն:	Դրամաշնորհային ծրագրերին ակտիվ մասնակցություն, ֆոնդահայթայթմանն ուղղված գործողությունների փաթեթի մշակում:

եղանակներին համապատասխան և <<Դպրոցական մինի այգու>> գաղափարի կյանքի կոչում:		
Դպրոցը նոր նյութատեխնիկակն բազայով հարստացնելուն ուղղված գործողություններ , մասնավորապես.համակարգիչ ներով ապահովում, նոր լաբորատոր սարքավորումներով և տեխնիկայով դասասենյակների կահավորում: -ՏՀՏ գործիքների ներդրում և կիրառում դասապրոցեսների ընթացքում: -Երեխաների ժամանցը արդյունավետ ապահովելու համար Smart գրադարանի հիմնում և նրան կից ընթերցասրահի կահավորում:	ՏՀՏ գործիքների նկատմամբ ոչ բավարար գիտելիքների առկայություն, վիռուսային ծրագրերի նկատմամբ բարձր ռիսկայնություն:	Կիբեռանվտանգության պահպանման վերաբերյալ դասընթացների կազմակերպում, վերահոսկողության բարձր մակարդակի ապահովում, ՏՀՏ գործիքների առավելությունների շեշտադրում՝ դրանց կիրառման օգտակարությունների պրակտիկ ներկայացման միջոցով:
-Աշակերտական խորհրդի դերի բարձրացում, -աշակերտների համար էքսկուրսիաների կազմակերպում, պատմամշակութային վայրեր այցելությունների կազմակերպում, տվյալ վայրերում թեմատիկ դասերի անցկացում -նախագծային աշխատանքների և հետազոտությունների խթանում ըստ նպատակային ուղղվածության: -Ինտելեկտուալ խաղերի և մրցույթների կազմակերպում,	Աշակերտների մոտ մոտիվացիայի պակաս:	Դպրոցական մրցույթներում հաղթողների պարգևատրում, անվճար էքսկուրսիաների կազմակերպում աշակերտների համար:

խրախուսման տարբեր ձևերի կիրառում:		
Դպրոցի կառավարման գործառույթի մասնակցայնության ավելացում՝ խորհրդակցական մարմինների հետ սերտ փոխազդեցությունների ձևավորում,	խորհրդակցական մարմինների կողմից իրենց վերապահված գործառույթների ոչ լիարժեք իրագործում	Կառավարման խորհրդի կողմից խորհրդակցական մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումների պարբերաբար կազմակերպում, համատեղ ծրագրերի իրականացում և արդյունքների գնահատում, յուրաքանչյուր մարմնի դերի կարևորության պահպանում
Մանկավարժական անձնակազմի վերապատրաստումների իրականացում, ինքնակրթության խթանում, անձնակազմի հմտությունների զարգացում, ՏՀՏ գործիքների և նորագույն տեխնոլոգիաների ճիշտ կիրառման նպատակով վերապատրաստումների և սեմինարների կազմակերպում	Մոտիվացիայի ցածր մակարդակ, ՏՀՏ գործիքների կիրառման նկատմամբ անվստահության և վախի առկայություն	Մանկավարժական անձնակազմի կողմից կատարված արդյունավետ աշխատանքի և ինքնակրթությամբ զբաղվելու համար խրախուսման տարբեր ձևերի կիրառում
Դպրոցում աշակերտների անվտանգության և ապահով միջավայրի հարատև հաստատում, ապաստարանի վիճակի գնահատում, տարածքի բարեկարգում և կահավորում՝ ըստ կարիքի	անհրաժեշտ ֆինանսական և մարդկային ռեսուրսների պակաս	Ֆոնդահայթայթման գործընթացի ակտիվ իրականացում, դրամաշնորհային ծրագրերի ակտիվ պլանավորում
-Զարգացնել ներառական կրթությունը՝ երեխաների և ծնողների համար պարբերաբար սեմինարների	Ոչ լիարժեք տեղեկատվության տիրապետում, ոչ կոմպետենտ	Հոգեբանի գործառույթի և դերի ամբողջական ներկայացմանն ուղված սեմինար-

կազմակերպման միջոցով, -զրույցների, քննարկումների կազմակերպում աշակերտ-ծնող-հոգեբան հարաբերությունների փոխգործունեության համար, -ծնողական ժողովների պարբերաբար հրավիրում, երեխաների ներգրավում ժողովներին, և կրթական չափորոշիչների, գնահատման եղանակների և այլ փոփոխությունների վերաբերյալ ինֆորմացիայի արագ փոխանակում՝ հետագա խնդիրներից խոսափելու և ծնող-ուսուցիչ կապը ամրապնդելու համար	վերաբերմունքի ցուցաբերում ծնողների և երեխաների կողմից,	քննարկումների կազմակերպում թե՛ ծնողների, և թե՛ աշակերտների համար, ներառական կրթության էության բովանդակալից ներկայացում և դրա կարևորության հստակեցում
Լինգաֆոնային դասարանի ստեղծում	Երեխաների կողմից անտարբերության ցուցաբերում	Անհատական և խմբային քննարկումների կազմակերպում երեխաների հետ, վերջիններիս հուզող հարցերի քննարկում, պարզաբանում, առկա հնարավորություններից օգտվելու առավելությունների ներկայացում,
Դասղեկի ժամերի մեջ ներգրավել աշակերտների համար մասնագիտական կողմնորշման թեմաների վերաբերյալ զրույցներ,քննարկումներ, անհրաժեշտության դեպքում ստեղծել համագործակցային կապեր տարբեր բուհերի և կազմակերպեությունների հետ:	Երեխաների կողմից անտարբերության և պասիվության ցուցաբերում	Այցելությունների կազմակերպում առաջավոր ԲՈՒՀ-եր, կազմակերպություններ, որոնք աշխատանքային արդյունավետ պրակտիկա ունեն և կկարողանան իրենց փորձով կիսվել երեխաների հետ, ցույց տալ այս կամ այն մասնագիտության

		առավելությունները և թերությունները, ապագայում աշխատաշուկա մուտք գործելու հնարավորությունները և կարծրատիպերը
Դպրոցի, տեղական ինքնակառավարման մարմինների և ՀԿ հանրույթի միջև համագործակցությունների հաստատում, հանդիպումների կազմակերպում՝ երեխաներին ընդգրկելով տարբեր միջոցառումներում, մրցույթներում,կամավորական աշխատանքներում:	Համայնքի ՏԻՄ-ի, ՀԿ-ների պասիվությունը, ծնողների և աշակերտների ոչ խոստումնալից մասնակցայնության ցուցաբերում կազմակերպվելիք միջոցառումներին:	-Խրախուսական և ոգևորիչ միջոցների կիրառում, մրցույթների կազմակերպում՝ հաղթողների պարգևատրում, -տեղեկատվական հանդիպումների պարբերաբար կազմակերպում, - դպրոց -համայնք կապի կարևորության ներկայացում թիրախ խմբին։

Գործողության ուղղվածությունը	Անհրաժեշտ միջոցներ և նյութատեխնիկական բազա
-Ուսումնական հաստատության ներքին հարդարման աշխատանքների իրականացում, այգու տարածքի բարեկարգում, մշակում:	Աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ են լինելու ֆինանսական միջոցներ, մարդկային ռեսուրս, մասնավորապես՝ աշակերտների և նրանց ծնողների կողմից կամավոր աշխատանք, դպրոցի անձնակազմի աջակցություն:
Դպրոցի կահավորում՝ նոր ՏՀՏ, լաբորատոր գործիքներով, դիդակտիկ նյութերով և տեխնոլոգիաներով:	Այս ամենը ձեռք բերելու համար առաջնային անհրաժշետություն կա ֆինանսական միջոցների հայթայթման, որից հետո դպրոցը ձեռնամուխ կլինի վերջինիս համար անհրաժեշտ տեխնոլգիաների, լաբորատոր գործիքների, սարքավորումների և կահավորանքի ձեռք բերման համար:
-Աշակերտական խորհրդի դերի բարձրացում, -աշակերտների համար էքսկուրսիաների կազմակերպում, պատմամշակութային վայրեր այցելությունների կազմակերպում, -նախագծային աշխատանքների և հետազոտությունների խթանում՝ ըստ նպատակային ուղղվածության, -ինտելեկտուալ խաղերի և մրցույթների կազմակերպում, խրախուսման տարբեր ձևերի կիրառում:	Ֆինանսական միջոցներ՝ էքսկուրսիաների, այցելությունների կազմակերպման, ինտելեկտուալ խաղերի անցկացման և երեխաների ժամանցը արդյունավետ ապահովելու նպատակով:
Դպրոցի կառավարման գործառույթի մասնակցայնության ավելացում՝ խորհրդակցական մարմինների հետ սերտ փոխազդեցությունների ձևավորում:	Կառավարման մարմնի ներկայացուցիչների նախաձեռնողականություն, պատասխանատվության բարձր աստիճան:
Մանկավարժական անձնակազմի մասնագիտական կարողությունների և հմտությունների ավելացում:	Պատասխանատվության բարձր զգացում, ստեղծագործ միտք և աշակերտակենտրոն նախաձեռնությունների իրականացում,մասնակցայնության ապահովում, ժամանակի տրամադրում:
Դպրոցում աշակերտների	Մարդկային և ֆինանսական ռեսուրսներ,

անվտանգության և ապահով միջավայրի կանոնակարգում։	նախաձեռնողականության ցուցաբերում:
Ինֆորմացիոն փոփոխություններին արագ հարմարվելու և ճկուն միջավայրի ապահովում։	Մասնակցայնության և հետաքրքրության ցուցաբերում, նախաձեռնողականություն։
Լինգաֆոնային դասարանի ստեղծում։	Համակարգիչների, լսողական սարքերի և այլ անհրաժեշտ տեխնիկայի ձեռք բերում:
Աշակերտների համար մասնագիտական կողմնորշմանն ուղղված գործողությունների իրականացում։	Համագործակցային կապերի ստեղծում ԲՈՒՀ-երի հետ, հանդիպումների կազմակերպչական աշխատանքների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար անհրաժեշտ միջոցներ։
Դպրոցի, տեղական ինքնակառավարման մարմինների և ՀԿ հանրույթի միջև համագործակցությունների հաստատում, հանդիպումների կազմակերպում:	Միջոցառումների իրականացում, երեխաների մասնակցայնության բարձրացում, տեղեկատվական բնույթի հանդիպումների կազմակերպչական աշխատանքների ֆինանսավորման համար անհրաժեշտ միջոցներ։

7. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական բազան

Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի արդյունավետ և ամբողջական իրականացման նպատակով անհրաժեշտ ռեսուրները տարանջատվում են երեք խմբի՝

- ֆինանսական,
- մարդկային,
- նյութատեխնիկական:

Վերոնշյալ խմբի ռեսուրսները այն կարևոր օղակներն են, որոնք անհրաժեշտ են ծրագրով նախատեսված նպատակները կյանքի կոչելու և առաջացած խնդիրների օպտիմալ լուծում տալու համար: Ֆինանսական միջոցները կարող են լինել ինչպես բյուջետային, այնպես էլ արտաբյուջետային, քանի որ դպրոցը որպես ՊՈԱԿ,կարող է մասնակցել տարաբնույթ ծրագրերի, նախաձեռնությունների, ստանալ դրամաշնորհ, և դրա միջոցները ծառայեցնել հօգուտ դպրոցի

բարգավաճմանը, կրթական կարողությունների ձեռք բերմանը և զարգացմանը: Մարդկային ռեսուրսների շարքում առաջին հերթին դիտարկվում է դպրոցի անձնակազմը՝ թե վարչակառավարչական, և թե մանկավարժական, ինչպես նաև աշակերտական և ծնողական հանրույթը, քանի որ կախված գործունեության տեսակից, յուրաքանչյուր ոք կարող է իր մարդկային ներուժը ներդնել և ապահովել պլանավորված գործընթացների արդյունավետ ընթացքը: Ինչ վերաբերում է նյութատեխնիկական ռեսուրսներին, ապա դրանք ամենուրեք անհրաժեշտ են, և կարող են լինել բազմատեսակ, հատկապես ներկայումս՝ տեղեկատվական տեխնոլոգիաների դարում:

8. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման վերահսկողության մեխանիզմները

Ինչպես արդեն նշվեց ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման վերահսկողական գործառույթի հիմնական կրողը դպրոցի կառավարման խոհուրդն է:Վերջինս սակայն այս գործառույթը իրականացնելիս հաշվի է նստում դպրոցի շահառու այլ մարմինների հետ և սերտ փոխհամագործակցության մեջ է նրանց հետ:

Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողության հիմնական քայլերն են՝

- Զարգացման ծրագրի կատարողականի վերաբերյալ հաշվետվությունների եռամսյակային և տարեկան կազմում՝ ըստ ծրագրային պահանջներին համապատասխան,
- Վերոնշյալ հաշվետվություններում ներկայացված տեղեկատվության հավաստիության վերլուծություն՝ աշխատանքային պլանի մշտադիտարկում,
- Դպրոցի տնօրենի և կառավարման խորհրդի անմիջական փոխազդեցություն վերահսկողական գործառույթի արդյունավետ իրականացման նպատակով,
- Շահառու կողմերի շարունակական ներգրավումը զարգացման ծրագրի թե՛

իրականացման, և թե՛ վերահսկողության գործընթացներում, հատուկ միջոցառումների կազմակերպում,

- Տարեկան աշխատանքային պլանի և զարգացման ծրագրի դրույթների համապատասխանության ստուգում, գնահատում,
- Զարգացման ծրագրերի ընթացիկ իրականացման տարեկան վերլուծություն, ցուցանիշների և վիճակագրական տվյալների վերանայում:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

N	*Միջոցառում/գործողություն*	*Ակնկալվող արդյունք*	*Սահմանված ժամկետ*	*Կատարված աշխատանքի նկարագրություն*	*Սահմանված ժամկետում միջոցառման/գործողության չկատարման կամ մասնակի կատարման /առկայության դեպքում/պատճառները*	*Զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկություններ*	*Նշումներ*